University of California
Agriculture and Natural Resources

Առողջ սննդի և ֆիզիկական գործունեության մասին դպրոցական ծրագրի գնահատում

Ծնողի տեղեկատվական թերթիկ

Հարգելի Ծնող/Խնամակալ,

Կալիֆորնիայի համալսարանի Սննդի քաղաքականության ինստիտուտը (Nutrition Policy Institute, NPI) գնահատում է դպրոցական ծրագիրը՝ պարզելու, թե արդյոք այն օգնում է աշակերտներին ավելի լավ սնվել և ֆիզիկապես ավելի ակտիվ լինել: Այս տարի երկու անգամ Ձեր երեխային կխնդրեն լրացնել կարճ հարցում այն մասին, թե ինչ է նա ուտում և ինչպիսի ֆիզիկական ակտիվություն ունի: Հարցումը կտևի մոտ 30 րոպե կամ ավելի քիչ դպրոցական օրվա ընթացքում:

Ի՞նչ է տեղի ունենում հարցումների հետ դրանք հավաքելուց հետո:
Բոլոր պատասխանները կլինեն գաղտնի: Հավաքված տվյալները կամփոփվեն զեկույցների և հոդվածների համար, և Ձեր երեխայի անունը երբեք չի նշվի: Թղթային հարցումները կպահվեն տեղական առողջապահության դեպարտամենտում՝ կողպված պահարանում, որը հասանելի կլինի միայն առողջապահության դեպարտամենտի այն աշխատակիցներին, ովքեր աշխատում են այս ծրագրի տվյալների ամփոփման վրա: Թղթային հարցումները կոչնչացվեն ծրագրի ավարտից ոչ ուշ, քան 3 տարի անց: Առցանց անցկացված հարցումները լիովին ապանույնականացվելու են, ինչը նշանակում է, որ Ձեր երեխան ընդհանրապես չի օգտագործի իր անունը հարցման մեջ: NPI-ի հետազոտողներին երբեք հասանելի չի լինի Ձեր երեխային նույնականացնող որևէ տեղեկատվություն:

Կա՞ որևէ պատճառ, թե ինչու մասնակցությունը կարող է վնասակար լինել իմ երեխայի համար:
Այն ժամանակը, որը Ձեր երեխան ծախսում է հարցումը լրացնելու համար, կարող է անհարմար լինել, բայց դա չի խանգարի ուսունական գործընթացին: Ձեր երեխայի մասնակցությունը որևէ կերպ **չի** ազդի որևէ ծրագրում ընդգրկվելու նրա իրավասության վրա և որևէ կերպ չի ազդի նրա գնահատականների վրա:Ձեր երեխայի մասնակցության ռիսկը շատ փոքր է:

Իմ երեխայի համար մասնակցության օգուտներ կա՞ն:
Ձեր երեխայի ներգրավվածությունը կօգնի մեզ սովորել, թե ինչպես բարելավել սննդի և ֆիզիկական ակտիվության ծրագրերը, որոնք ապագայում կարող են օգուտ բերել Ձեր երեխային: Այս ուսումնասիրության արդյունքները պոտենցիալ օգուտ կբերեն բոլոր երեխաներին, ովքեր մասնակցում են այս տեսակի սննդի և ֆիզիկական ակտիվության ծրագրերին:

Կարո՞ղ եմ հետագայում փոխել միտքս:
Այո: Բացի այդ, Ձեր երեխան կարող է ցանկացած պահի հրաժարվել մասնակցությունից: Մասնակցությունը լիովին կամավոր է:

Ի՞նչ պետք է անեմ, եթե հարցեր ունենամ:
Կապվեք հարցման համակարգող Ամանդա Լինարեսի հետ՝ amlinares@ucanr.edu, 916-200-5188

Ի՞նչ կլինի հետո:
Եթե ցանկանում եք, որ Ձեր երեխան մասնակցի հարցմանը, ապա Ձեզ այլ բան պետք չէ անել:

Եթե **չեք ցանկանում, որ** Ձեր երեխան մասնակցի հարցմանը, խնդրում ենք ստորագրել ստորև և հաջորդ 3 օրվա ընթացքում վերադարձնել ձևաթուղթը դպրոց:

Ես չեմ ցանկանում, որ _____ (Ձեր երեխայի անուն, ազգանունը) մասնակցի՝

Ծնողի անուն, ազգանուն՝ _____

Ծնողի ստորագրություն՝ _____ Ամսաթիվ՝ _____